Ուսումնական նախագծի թեմատիկ պլան

Թեմա՝ «Միջնադարյան Հայաստանի քաղաքները՝ պաշտպանական ու մշակութային կենտրոններ»

Առարկան՝ Հայոց պատմություն

Դասարանը՝ 8- րդԱ

Տևողությունը՝ 6 շաբաթ

Սովորողներ՝

1.Միլենա Իսախանայան
2.Էլեն Անդրեասյան
3.Ավետ Խաչատրյան
4.Աննա Գալստյան
5.Գոռ Ավագյան
6.Սուրեն Մանուկյան
7.Դավիթ Բաքոյան
8.Մանե Ավագյան
9.Ալեքս Թադևոսյանը
10.Մարի Եղիազարյան
11.Մանուկ Մանուկյան

Նպատակը՝

Ուսումնասիրել միջնադարյան Հայաստանի քաղաքաշինությունը, նրանց պաշտպանական ու մշակութային դերը, և ձեռք բերված գիտելիքների հիման վրա ստեղծել մոդելային մակետ:

Խնդիրները՝

1. Իմացական ՝ ուսումնասիրել միջնադարյան Հայաստանի քաղաքների պաշտպանական և մշակութային դերը, ճարտարապետական կառուցվածքը և պատմական զարգացումը:
2. Հմտությունների զարգացում ՝ զարգացնել խմբային աշխատանքի , պլանավորման և նախագծման հմտությունները.
3. Ստեղծագործություն և քննադատական մտածողություն ՝ Նպատակ ունենալով մակետում ճիշտ պատկերել միջնադարյան քաղաքների կառուցվածքային առանձնահատկությունները:

Նյութեր՝

1. 1. Դասագրքեր, հոդվածներ և առցանց ռեսուրսներ Միջնադարյան Հայաստանի մասին:

2. Միջնադարյան Հայաստանի քաղաքների նկարներ և տեսանյութեր:

3. Սկզբնաղբյուրներ:

4. ՏՀՏ գործիքներ

5. Թուղթ, մկրատ, սոսինձ և մարկերներ ,այլ նյութեր:

Վերջնարդյունքը՝ Ստեղծել Միջնադարյան Հայաստանի քաղաքի մոդելային մակետը՝ մանրամասն ներկայացնելով դրա կառուցվածքը, պաշտպանական և մշակութային կենտրոնների նշանակությունը:

Ընթացակարգը՝

Շաբաթ 1:

1. Նախապատրաստական աշխատանք

- Սովորողները ուսումնասիրում են միջնադարյան Հայաստանի քաղաքների մասին տեղեկատվությունը (գրքեր, հոդվածներ, տեսանյութեր)՝ պատկերացում կազմելու համար նրանց կառուցվածքի և դերի մասին:
- Խմբային քննարկումների ընթացքում սովորողները ուսումնասիրում են այն հարցը, թե ինչու էին միջնադարյան քաղաքները կառուցվում ամրացված տեսքով և ինչպես էին նրանք պաշտպանվում արտաքին վտանգներից:
- Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իրենց ուսումնասիրված քաղաքների օրինակը՝ անդրադառնալով դրանց պաշտպանական և մշակութային նշանակությանը:

Շաբաթ 2:

2. Այցելություն թանգարաններ, հանդիպում թեմայի մասնագետների, բանախոսների հետ:

- Սովորողները կայցելեն Երևանի պատմության թանգարան կամ կլսեն հրավիրյալ բանախոսից, ով լրացուցիչ տեղեկություններ կհաղորդի Երևան քաղաքի հատակագծի, առանձնահատկությունների մասին:Ստացված ինֆորմացիան կհամադրեն իրենց գիտելիքների հետ :
- Այնուհետև կհստակեցնեն անելիքները և կպատրաստվեն թեմայի ուսումնասիրմանը և վերջնարդյունքի ստեղծմանը:

Շաբաթ 3:

3. Կազմակերպչական հարցեր.

- Ստեղծել աշխատանքային 2 խումբ՝ բաղկացած 5 և 6 հոգուց: Ուսուցիչը տալիս է խմբերին հստակ առաջադրանքներ և սահմանում վերջնաժամկետ :
- Առաջին խումբը՝ հետազոտողներ,ովքեր պատմական տարբեր աղբյուրներից օգտվելով տեղեկություններ կհավաքեն Միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության վերաբերյալ:
- Երկրորդ խումբը ՝ ուսումնասիրողներ,ովքեր պետք է ուսումնասիրեն և վերլուծեն միջնադարյան Հայաստանի քաղաքաշինությունը:

Շաբաթ 4:

4. ***Մակետի նախագծում***

- Մակետի պլանավորում: Խմբերը որոշում են մակետի չափերը, օգտագործվող նյութերը և յուրաքանչյուր մասի դերը:
- Դիզայնի մշակում: Նախագծվում է քաղաքի կառուցվածքը՝ ներառելով պաշտպանական պատերը, գլխավոր մուտքերը, գլխավոր շենքերն ու մշակութային

կենտրոնները:

• Մակետի նյութերի հավաքում: Հավաքվում են բոլոր անհրաժեշտ նյութերը՝ կավ, փայտ, թուղթ, ներկեր և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են մակետի պատրաստման համար:

Շաբաթ 5:

5. ***Մակետի պատրաստում***

- Շինարարական աշխատանքներ: Խմբերը միասին կառուցում են քաղաքի մակետը՝ ըստ նախապես մշակված հատակագծի:
- Նկարագրություններ և մանրամասներ: Աշակերտները պատրաստում են փոքրիկ նկարագրություններ քաղաքի տարբեր հատվածների՝ շենքերի, պաշտպանական կառույցների և մշակութային կենտրոնների համար, ինչը կօգնի մակետին հաղորդել ավելի ամբողջական պատկեր:
- Ուսուցիչը կիրականացնի գիտելիքի ստուգում ուսումնասիրված թեմայի վերաբերյալ հարցաշարի միջոցով:

Շաբաթ 6:

6. Նախագծի ներկայացում.

• Աշակերտները կներկայացնեն Միջնադարյան Հայաստանի քաղաքի մոդելային մակետը՝ մանրամասն ներկայացնելով դրա կառուցվածքը, պաշտպանական, տնտեսական և մշակութային կենտրոնների նշանակությունը: Մակետի միջոցով նրանք կկարողանան իրենց գիտելիքներն ու պատկերացումները ցուցադրել միջնադարյան Հայաստանի քաղաքների մասին՝ ներկայացնելով պատմական փաստերը և նրանց կարևորությունը:

• Մակետի ցուցադրության ժամանակ յուրաքանչյուր խումբ կներկայացնի իրենց ուսումնասիրած տեղեկատվությունը, պատմական մանրամասներն ու իրենց մեկնաբանությունները՝ ցուցադրելով խորացված և վառ պատկերացում քաղաքի մշակութային, տնտեսական ու պաշտպանական դերի մասին:

Գնահատում :

Աշխատանքը կգնահատվի ուսուցչի, աշակերտների և հրավիրված հյուրերի կողմից՝ հաշվի առնելով մակետի որակը, բովանդակային խորությունը և ներկայացման հմտությունները:

Այս նախագծի միջոցով սովորողները կսովորեն պատմական և մշակութային արժեքների մասին, ինչպես նաև կզարգացնեն թիմային աշխատանք, ստեղծարարություն և գործնական հմտություններ: